Հիմնավորում՝ Հասարակական խորհրդում ներգրավման վերաբերյալ

Նախ շնորհակալություն դիմելու հնարավորության համար։ Վստահաբար, հասարակական ոլորտի մարդիկ իրենց աշխատանքային հարուստ փորձով, կարող են համակարգի բարելավմանն ուղղված ճիշտ և նպատակային քայլեր և ռազմավարություն առաջարկեն՝ բնականաբար իրենց գիտելիքների սահմանում։

ՆԳ նախարարին կից Հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար ինքս ունեմ 3 հիմնական պատճառ։ Հիմնավորված պատճառները ստորև.

1., Ցանկանում եմ միջազգային հարուստ փորձս հասարակական և մեդիա ոլորտներում ծառայեցնել ՀՀ տարբեր ռազմավարական ոլորտներում, որոնցից ամենակարևորներից է ՆԳ նախարարությունը :

Հասարակական ոլորտի իմ առաջին փորձերը կապված են կամավորության հետ, 2014 թվականից կամավորել եմ տարատեսակ արտասահմանյան հեղինակավոր կազմակերպություններում և հավաքել անհրաժեշտ գիտելիքներ,կապեր ու փորձառություն , որպեսզի հիմնադրել իմ հասարակական կազմակերպությունը։ 2018 թվականին հիմնադրել եմ ԷԴՈՒՀԱԲ ՀԿ-ն և մինչ օրս,թե՛ կազմակերպության շրջանակներում թե՛ որպես անհատ, իրականացնում եմ տեղական և միջազգային ծրագրեր երիտասարդների համար : Հանդիսանում եմ Եվրոպական Հանձաժողովի (EU Commission) կողմից ստեղծված Էրազմուս ուսանողների և շրջանավարտների դաշինքի և garagErasmus հիմնադրամի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում։ Նշված կազմակերպությունների հետ իրականացրել ենք տարատեսակ ծրագրեր հայ ուսանողների և կամավորների համար, բոլորը անվճար Հանդիսանում եմ ԱՄՆ կառավարության ծրագրերի շրջանավարտ։ 2023-ին եղել եմ ԱՄՆ Պետ. Դեպի կողմից ստեղծված The Young Transatlantic Innovation Leaders Initiative (YTILI) ծրագրի մասնակիցը և ՀՀ ներկայացուցիչը։ Համագործակցել եմ ԱՄՆ , Գերմանիայի, Իտալիայի արտաքին գործերի նախարարությունների հետ։ Ամերիկայի Չիկագո քաղաքում, վարել եմ երիտասարդական հաղորդաշար տեղական և միջազգային հասարակական անցուդարձի մասին։ Աշխատել եմ տարբեր արտասահմանյան հասարակական և բիզնես կազմակերպությունների հետ որպես ծրագրերի համահեղինակ, համակազմակերպիչ, համակարգող և/կամ խորհրդատու։

2. *Ցանկանում եմ մասնագիտական կարողություններս, կապերս և լծակներս օգտագործել ՀՀ տարբեր ռազմավարական ոլորտներում, որոնցից ամենակարևորներից է ՆԳ նախարարությունը։*

Լինելով մասնագիտական վերելքի ընթացքի ճանապարհին, կարևորելով հասարակական գործիչների դերը հասարակության հզորցման գործում, մեծ ցանկություն ունեմ իմ մասնագիտական կարողությունները,կապերն ու լծակները

ծառայեցնել ՀՀ ՆԳ նախարարության բարելավման համար ևս: Արդյունավետորեն համագործակցում եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ , որտեղ ժամանակ առ ժամանակ իրականացնում եմ տարատեսակ փորձագիտական աշխատանքներ:Արդեն քանի տարի է, վարում եմ հաղորդումներ Բուն tv հեռուստաալիքով: Թեմաները որոնք թիրախավորում եմ կապված են հասարակության, մեդիայի, մասնագիտությունների և երիտասարդների նպատակների և երազանքների հետ: Այսինքն ունեմ հնարավորություն մեդիա լայն շրջանակներում արտահայտելու կարծիք, հրավիրելու տարբեր փորձագետների և խոսելու թեմաներից , որոնք համարում եմ կարևոր մեր երկրի համար: Սովորել եմ Երևանի Պետական Համալսարանի Հոգեբանության և Փիլիսոփայության ֆակուլտետում, ավարտել եմ սոցիալական հոգեբան մասնագիտացմամբ: Ունեցել եմ 50- ից ավել դասընթացների, աշխատարանների, սեմինարների,համաժողովների մասնակցելու հնարավորություն՝ հիմնականում արտասահմանյան երկրներում:

3. *Երիտասարդների ձայնը ավելի լսելի դարձնել:*

Գաղտնիք չեմ բացահայտի, որ երիտասարդները երկրի ոչ միայն ապագան են , այլ նաև ներկան: Առանց ակտիվ, գրագետ, կիրթ, իրենց իրավունքներն ու պարտականություններն իմացող երիտասարդների անհնար է առողջ ու երջանիկ հասարակություն կառուցել: Ինկապես հարուստ աշխատանքային փորձ ունեմ երիտասարդների հետ և նրանք շատ հաճախ մատնացույց են անում տարբեր խնդիրներ, որոնք ինքս էլ նկատած չեմ լինում: Ընտրելով ինձ, որպես խորհրդի անդամ, դուք կունենաք հարյուրավոր (գուցե հազարավոր) երիտասարդների հետ անուղակի կապ իմ միջոցով, ովքեր ապրում են թե՛ Երևանում, թե՛ մարզերում ու հեռու գյուղերում, թե՛ Հայաստանից դուրս: Իմ միջոցով երիտասարդները կկարողանան խնդիրներ բարձրացնել և ինչու՞ ոչ հասցեագրել դրանք արդյունավետորեն: Մենք երկար տարիներ ապրել ենք հասարակությունում, որտեղ երիտասարդների ձայնը անտեսված է եղել և դա բերել է շատ բացասական երևույթների: Վստահ եմ, հիմա ժամանակն է ավելի շատ ու ավելի դրական ներդրումներ անել երիտասարդների զարգացման մեջ, ներդրման իմ տարբերակներից է նրանց ձայնը ավելի լսելի դարձնել տարբեր պետական, միջազգային, բիզնես և հասարակական հարթակներում:

Շնորհակալություն հայտս ուսումնասիրելու համար:

Հարգանքներով՝ Գևորգ Հարությունյան

16.12.2024